ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

29.02.2019
341-74

ՀՀ Ազգային ժողովի լրատվության
և հանրային կապերի վարչության
պետ Հրայր Զորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Զորյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել ArmDaily.am առցանց պարբերականը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում:

Խմբագրության լրագրող Արփինե Պետրոսյանը 2019 թ.-ի մարտի 26-ին դիմել է ԱԺ լրատվության և հանրային կապերի վարչություն՝ խնդրելով տրամադրել ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակության՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարած այցի վերաբերյալ տեղեկություններ: ՀՀ ԱԺ լրատվության և հանրային կապերի վարչության պաշտոնական գրությամբ լրագրողի հարցման 3-րդ հարցին լիարժեք պատասխան չի տրամադրվել:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություն այն մասին, թե ՀՀ պետական բյուջեից որքան գումար է հատկացվել Գերմանիայի Դաշնային Հանրապետություն մեկնած պատվիրակության անդամներից յուրաքանչյուրի ճանապարհածախսի, գիշերակացի և օրապահիկի համար:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան